ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՂ ՊՏՂՈՒՆՔ
Հ/Հ 900322235038
ՀՎՀՀ 04701766
ԻՆԴԵՔՍ 1145

ՀԵՌԱԽՈՍ 0231 6-35-50

РА АРМАВИРСКАЯ
ГУБЕРНЯ СЕЛО ПТГУНК
ИНДЕКС 1145
ТЕЛ.0231 6-35-50
RA THE MARZ OF ARMAVIR
VILLAGE PTGHUNK
INDEX 1145

թիվ 01-ԼՏ. 30.11. 2011թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն՝ Ա.Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ.

Ձեզ է ներկայացվում Արմավիրի մարզի Պտղունք համայնքի ղեկավարի 2011թ.-ի Նոյեմբեր ամսվա ընդունած որոշումները, արձակած կարգադրություն չունենք:

Առդիր՝ 4 թերթ.

Պտղունք համայնքի ղեկավար /Ս.Ձեյնալյան/

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
Մուտքագրված 11628-11
«07» 12 2011 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Պտղունք համայնք, 0231-6-35-50, ptghunk 1@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«21» Հոկտեմբեր 2011 թ.վականի N 14

ՆՈՐ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի 29 դեկտեմբերի N2387-Ն որոշման՝ «Անշարժ գույքի հասցեավորման հիմնական կանոնները» 34-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ որոշում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Պտղունք գյուղական համայնքի 042-001 ծածկագրի համայնքային սեփականություն հանդիսացող ինքնակամ օժանդակ կառույցին տալ Մուսալեռ փողոց թիվ 2 հասցեն:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՉԵՅՆԱԼՅԱՆ

20 11թ. _____ «___»
գ. Պտղունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Պտղունք համայնք, 0231-6-35-50, ptghunk 1@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«16» Հոկտեմբեր 2011 թ.վականի N -13-

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N731-Ն որոշման 1-ին կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Պտղունք գյուղական համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասում գտնվող ինքնակամ կառույցը օրինականացնելու նպատակով՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Պտղունք գյուղական համայնքին սեփականության իրավունքով պատկանող 042-001 ծածկագրի հողամասում գտնվող 29,7 քմ ընդհանուր մակերեսով ինքնակամ օժանդակ կառույցը ճանաչել համայնքային սեփականություն:
2. Սույն որոշումը սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային ստորաբաժանում՝ պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՉԵՅՆԱԼՅԱՆ

20 11թ. _____ «___»
գ. Պտղունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Պտղունք համայնք, 0231-6-35-50, ptghunk 1@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«07» դեկտեմբեր 2011 թ.վականի N 12

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄՀԵՐ ԲԱԼԵՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Պտղունք գյուղի բնակիչ՝ Միեր Բալեյանը դիմել է Արմավիրի մարզ գ. Պտղունք Խաղաղության փողոց թիվ 24 հասցեում գտնվող բնակավայրի, տնամերձ 700,0ք.մ օրինական հողամասին կից 44,0 ք.մ զբաղեցրած հողամասի և օրինական հողամասի ինքնակամ կառուցված բնակելի տանը և շենք-շինությունները օրինականացնելու խնդրանքով, որը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ կառույցը իրականացվել է մինչև 15.05.2001թ. հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3, ենթակետով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետով , «ՏԻՄ»-ի մասին ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով՝ որոշում եմ՝

1. Վերականգնել Արմավիրի մարզ գյուղ Պտղունք Խաղաղության փողոցի թիվ 24 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Միեր Բալեյանի գույքային իրավունքները , ճանաչելով նրա սեփականության իրավունքը 700,0 ք.մ օրինական հողամասին կից 44,0 ք.մ զբաղեցրած հողամասի և օրինական հողամասի վրա գտնվող բնակելի տան և շենք-շինությունների նկատմամբ
2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում
3. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ ԿԱ Ա ԾԿ ՊԿ համապատասխան տարածքային ստորաբաժանման կողմից:
4. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի Միեր Բալեյանի սեփականության իրավունքի սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի և շենք – շինությունների նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՄՎԵԼ ՋԵՅՆԱԼՅԱՆ

20 11թ. _____ «____»
գ. Պտղունք